

61

44  
P-31

2010  
10

2002

ՊՍԱԿ ՄԸ

առելութե յարձակագիր  
ՀԵՂՋԱԿԱՐ  
Եղանակ 28 մարտ 1900.

# ՓՐԻԴՐԻԽ ՄԻԼԼԵՐԻ

ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՎՐԱՅ

Ի Կ. Յ. ԲԱՍՄԱՉԵԱՆԻ

(Հանուաֆ ի Բազմավիպէ Հատոր ԾԶ)



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԵՈՅՆ ԴԱՇԱՐՈՒ

1898

49  
F-31


ՊՍԱԿ ՄԸ

# ՓՐԻԴՐԻԽ ՄԻՒԼԼԵՐԻ

ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՎՐԱՅ

Ի Կ. Յ. ԲԱՍՄԱՉԵԱՆՔ

1005  
614992



518

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ԴԱԶԱՐԱԿ

13512



Պ Ա Ա Կ

Ա Ն Թ Ա Ռ Ա Մ

Ի Վ Ե Ր Ա Ց Շ Ի Ր Մ Ի Ւ

Փ Բ Ի Դ Ր Ի Խ Ի Մ Ի Կ Լ Լ Ե Բ Ի

Ի Ց Ո Ւ Շ Ա Ն Մ Ո Ո Ա Ց

Զ Ո Ր

Մ Ա Տ Ո Ւ Ց Ա Ն Ե Ն

Հ Ա Յ Ո Յ Բ Ա Ն Ա Ս Ե Ր Ք

Յ Ա Ր Գ Ա Ն Ո Ք

Ս Ր Տ Ի



Բարեհամիւս սիրելոյ Ա. Վ. Վասնաթեան  
վեհան 26. Օկտոբ. 1890. Միշաւակ. Փալմելը



## ՊՍԱԿ ՄԸ

### ՓՐԻԴՐԻԽ ՄԻԼԵԼԵՐԻ

#### ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՎՐԱՅ

---

#### ՆՊԱՏԱԿ

**Ժ**ԵՐԵՒԱ անօգուս լրպայ հրապարակ հանելն ողբացեազ հայերինազէս ուսուցչապէտ Փրիդրիխ Միշալը, ինձ հետ ունեցած հայերէն բղակցուրիւնն. բղակցուրիւնն. որ անշոշտ իր արժէքն ունի, քիչ թէ շատ, հայրանասիրուրեան համար: Այս բղոց մէջ պիտի տևսնեն ընթերցողք՝ մեժահամարա արևելագետին ունեցած հմտուրիւնն մեր գրարար լեզուի, որով ոչ միայն կը գրեր գրչի ձկունուրեամք՝ այլ և կը խօսէր հաշասարապէս:

Ներկայ համակները շատ մը ժանօր արկածներու համեդիսելի ետքը՝ կրիս ձեռքս անցած են նոյնուրեամք. բարերախոսուրիւնն մը՝ զոր չեմ ունեցած ուրիշ ձեռագրաց նկատմամք, զի հանակուորեն միայն ազատած եմ վայրաց ժիրանելերք.....

Համակներէն յասա՞ կ'արժէ որ կենագրան քանի մը գտերով ժանօրացը ներ հանցաւ գիտեականը, մասնաւրապէս շեշտելով իր բանքարաւոր գործունենուրեան վրայ: Այ-

այս կը դիմեմ արդիկն ժանօր հրատարակուրեան մը, Վեր. Հ. Գարեգին վ. Զարբիանագեանի «Ուսումնասիրուրիւնն հայ լեզուի և մատենագրուրեան յարեւնուս» գործոյն (Վեհանիկ, 1895), որ սրբագրեալ և ձիսացակ բարգմանուրիւնն է ուրիշ ողբացեազ հայերէնազէս մը՝ Շրումսֆի՝ յօդուածներուն: Պահաներն ամրողացուցած եմ այլ թերթերի և գրքեր, զորս կը յիշատակեմ ի կարգին:

Չենուամ լսել ենե՛ թէ իմ զրած բղերուս մէջ բացայաց կերպով կը տեսնուի ժամանակուսն ունեցած համբակուրիւնն ու խակուրիւնն, բանասիրական խնդրոց նկատմամք: Այսօր բղորովին տարբեր կը խորհիմ. ուստի թեական է՝ թէ տարբեր ալ պիտի գրէի, երկ հարկ ընար գրել: Բայց նոյնուրեամք կը ներկայացընել զանոնի այստեղ՝ ցուցընելոյն համար մեր յարաքերուրեանց գաղտնեիքն և մեր արեկամուրեան սկզբապատճառը:

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**Փ**րիդորի Միհևեր թէեւ գերմանացի ընտանեաց սերունդ<sup>1</sup>, բայց ծնած է ի Յեմիկ Բոհեմիոյ (5 մարտ 1834): Ուսմանց սկզբնական ընթացքն ըրաւ նախ ի Զնայեմ Մարափոյ, ապա ի Վիեննա և ի Գեոտափինդէն, սկսեալ 1853է<sup>2</sup> մինչեւ 1857: Հետեւալ տարին Վիեննայի Համալսարանին մատենագարանին մէջ պաշտօն վարելով, ապա արքունեաց մատենագարանին վերատեսուչն անուանեցաւ: 1866ին արտասովոր ուսուցիչ եղաւ համեմատական լեզուագիտութեան և սանսկրիտ լեզուի, որմէ երեք տարի յետոյ (1869) ստացաւ Ռասուցապեսի ափազոսն<sup>3</sup>: նոյն տարին կայսերական Գիտութեանց Ճեմարանի անդամ եղաւ: 1884ին աշքի հիւանդութեան պատճառաւ հրաժարեցաւ մատենագարանապետի պաշտօնէն:

Բոլորովին բանասիրական և ցեղաբանական ուսմանց տուաւ ինքզինքը Միւլեր: Իր վիսաւը զրուածքն է Ծրագիր լեզուագիտութեան (Grundriss der Sprachwissenschaft) խորագիրը կրող երկասիրութիւնն, որուն տպագրութիւնն սկսած է 1876ին և աւարտած 1887ին: Խոահատոր հսկայ գործ մը, յորում հեղինակը կու տայ մեզ բերականական համառութիւնն և ընթերցման հատուածներ՝ ամէն ծանօթ լեզուաց: Այս զըրուածքը կ'ամբողջացընէ ուրիշ երկասիրութեամբ մը, զոր կը կոչէ Ծեղնանուր ազգագրութիւն (Allgemeine Ethnographie), որուն առաջին տպագրութիւնն եղած է 1879ին, ի Վիեննա, հանդերձ ցեղաբանական առասովլ մը (Ethnologischer Atlas, Վիեննա, 1884): Ինքը Միւլ-

եր յօրինեց աւատրիական Novara կոչուած մարտանաւուն ճանապարհորդութեան ապթիւ տրուած տեղեկալիմեանց թէ լեզուագիտական ման (տպ. ի 1867), և թէ մարդաբանական ման (տպ. ի 1873):<sup>4</sup>

Մեր մինչեւ հիմայ ըսածներէն բիշ շատ կրնայ հասկըցուիլ՝ որ մասնագէտ մը չէ Միւլեր, կ'ըսէ Շրումազի. սակայն առանձին պարագմանը ընտրած է երանեան լեզուաց ուսումնամակրութիւնն, որոնց թուոյն մէջ կը զատէ նաեւ հայերէնը, քան ուրիշ լեզուաց: Իր լեզուաբանական զրութիւններն հրատարակուած են՝ առաւելապէս՝ Վիեննայի Գիտութեանց Ճեմարանի Նստից տեղեկագրոց՝ փիլիսոփայական – պատմական բաժնին մէջ՝, և որոնց ժամանակագրական ցուցակն հսու կը դնենք:

Ի հատորն 1. 1860, յէ 194–199,  
1<sup>o</sup>. – Բայական յետադար հայ լեզուի: 2<sup>o</sup>.  
– Անուշեք հայ րուցոց: Ի հատորն 1. 1861, 570–595 հատուած մը հայ լեզուի ձայնախոսութեան նկատմամբ, զոր ցննազատց Եվալդ (ի Göttingische Gelehrte Anzeigen, 1862, յէ 964), և որոյ շարայաբութիւնն երեւցաւ ի հատորն Խ. 1863, յէ 3–14, և ի հատորն Խ. 1863, յէ 249–253: Արդէն նոյն տեղեկագրոց ութերորդ հատորին մէջ (283) Հ. կղեմէս վ. Միւլերեան հրատարակած էր Ռուսիայ, Պարսկաստանի և Հնդկաստանի մէջ սովորական եղած հնչմանց վրայ տեղեկութիւններ: Ի հատորն Խ. 1863, յէ 554–567, Տեղեկութիւնն մը անուանց հոլովման վրայ ի հայ լեզուի. և յէ 576–580 յօդուած մը դիմաւը գեր-

անուանց վրայ երանեան ու նաեւ հայ լեզուի մէջ: Ի հտ. Խ. 1864, յէ 227–242, Զագար բուրդ գաւառաբարբառին վրայ: Յէ 424–430, Հայկականք վերնագրին տակ՝ հինգ հատուածք աշա յետազաս վանկին վրայ, և աստուած, կուշդ, առիւճ, ձուկն բառերուն: Իսկ յէ 431–438 հայկական գրութեան ոկզինաւորութեան վրայ, վիմազ զրեալ համեմատական ցուցակով մը հայ և վրայի այբուբենից: Միւլեր կը կարծէր՝ թէ անոնց ծագումը վնասութիւն է արամէականին քանի մը ձեւերու մէջ, որոնց մէջ յառաջ եկած է նաեւ պահապեկին ու հնդիկն: Ի հտ. Կ. 1870, յէ 47–56, հայ բայից անկատար գէմքին վրայ, ինչպէս նաեւ զիտողութիւնը քանի մը հայկական բարից, որպէս աղուկու, տէր, սիրամարդ, վարդապետ, և այլն, և իգական ունի վերջաւորութեան: Հտ. Կ. 1870, յէ 264–278, զիտողութիւնը երկու հայ սեպագիր արձանագրութեանց վրայ: Հտ. Կ. 1870, յէ 264–278 հայ լեզուի բարից վերջաւորութեան և շեշտի կանոնին վըրայ, յանուանս և ի գերանուանս և ի բայս. և զարձեալ ստուգաբանութիւնը քանի մը հայ բարից. իսկ յէ 277–8, կը խօսի այն օտար (արամէական) բարից վրայ, որ փոխ առնուած են հայերէնէ և հայերէնի միջոցաւ: 1874ին կը հրատարակէ տեսութիւն մը բայից երկրորդ գէմքի և վերջաւորութեան վըրայ, գործիականի բատին վրայ, և քանի մը բառերու ստուգաբանութիւնները կ'ընէ: 1878ին բայից սահմ. կատարեալի և ստորագասականին ց տառին վրայ, և բնութիւն մը ս, չ, չ տառից. գարձեալ ստուգաբանութիւնները քանի մը բարից: 1877ին ընտիր յօդուած մը՝ սա վերնագրով, Հայերէնի դիրքը հնդեւրոպական լեզուաց շրջանին մէջ: Եթէ 245–248 կը քննագրաւ Ասողկան մէկ պարբերութիւնն Հայ այբուբենը գիտեան նկատմամբ, պարբերութիւնը մեր լեզուի նկատմամբ յաջորդ տարիներու թէրթից մէջ ալ, զորս աւելորդ կը համարինը մի առ մի յիշատակել ընթերցու-

ղաց չծանրանալու համար. միայն կարեւոր է ըսկը՝ թէ նոյն թերթի ձիթ հատորին մէջ (1890) Հայկականք Զ. յօդուածով յաւելուած մը կ'ըսէ Հիւրշմանի քննած հայերէն 299 բառերու: Այս յօդուածին մէջ Միւլեր 69 հայերէն բառից ստուգաբանական մեկնութիւնը տարրով՝ կ'ըսէ, «թէ ապահովութեամբ մեկնուած բնիկ հայերէն բառից թիւն իրը 350 կը բարձրանայ»:  
\* \* \*

Աշխատակից եղաւ Միւլեր հայ լեզուին վրայ գրած յօդուածներս՝ Արեւելի և Արևուշաք կոչուած եռամսեայ հանդիսին, զոր բնենֆէյ կը հրատարակէր ի Գիտուինգէն (1860–66), որոնց մէջ նշանակութեան արամնի է Եօրն ի մեմատասկը կոչուած վիպասանութեան հայ թարգմանութեան վրայ (հտ. Բ. 369–374) գրածն, և որոյ ուսութարգմանութեան մը ակնարկութիւնն ըրած էր Լէրիս: Արդի մանր մունք ստուգաբանական հատուածներու ալ հեղինակ է հանգուցցալը, գերձեալ ստուգաբանութիւնը քանի մը հայ բառից մէջ:

Գլխաւոր աշխատակից եղած է Միւլեր՝ վիեննայի Համալսարանին Արեւելեան կամագաւ ձեռքորդ հաստատուած (ի 1887) Արեւելագիտական Ուսումնաբերերին<sup>2</sup>, որոյ երկրորդ տարւան (1888) հատորին մէջ՝ կը խօսի Ղեւննպեայ երիցու և Ասողկան պատմական երկասիրութեանց վրայ, որոնք ակնարկութիւնն ըրած էր Լէրիս: Արդի մանր մունք ստուգաբանական հատուածներու ալ հեղինակ է հանգուցցալը, գերձեալ ստուգաբանական հանգիստը մէջ: Գլխաւոր աշխատակից եղած է Միւլեր՝ վիեննայի Համալսարանին Արեւելեան կամագաւ ձեռքորդ հաստատուած (ի 1887) Արեւելագիտական Ուսումնաբերերին<sup>2</sup>, որոյ երկրորդ տարւան (1888) հատորին մէջ՝ կը խօսի Ղեւննպեայ երիցու և Ասողկան պատմական երկասիրութեանց վրայ, որոնք ակնարկութիւնն ըրած էր Լէրիս: Արդի մանր մունք ստուգաբանութիւնն ըրած էր Լէրիս: Արդի մանր մունք ստուգաբանութիւնն ըրած էր Լէրիս: Արդի մանր մունք ստուգաբանութիւնն ըրած էր Լէրիս: 1885 և 1887): Մանրամասն և շահազգրիու են նոյն զրաց վրայ տեղեկութիւններ, ինչպէս իր ամէն ուսութիւնները քանի մը բարից: 1885 և 1887): Մանրամասն և շահազգրիու են նոյն զրաց վրայ տեղեկութիւններ, ինչպէս իր ամէն ուսութիւնները քանի մը բարից:

1. Տե՛ս Բազմավեպ, 1898 Յուլիս, յէ 342:

2. Vapereau, Dictionnaire contemporain, ի Համագիր Ֆրեդեր Մյուլլեր.

3. Vapereau, անդ:

4. Vapereau, անդ:

5. Sitzungsberichte der K. K. Akademie der Wissenschaften in Wien, Philosophisch-historische Classe.

գագուղք՝ Հանդիս Ամսորեայի անցեալ համար ներուն մէջ:

2. Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes,

տայ մասնաւորապես՝ թէ հայերէնի ձայնաւ տորաց նախընթաց պակասութիւնը, պատճառ եղած ըլլայ անոր նուազութեան կամ աղբատութեան: — Նոյն հատորին մէջ (258—262) տեղեկութիւն մը կու տայ 1884ին Էջմիածին տպագրուած Առաքել Դավիթեցոյ պատմագրութեան վրայ: Իսկ չորրորդ հատորին մէջ (1890, յէս 243—246) Երօն իմաստոց վիպասանութեան վրայ տեղեկութիւն մը: Երեք անգամ տպագրութեամբ հրատարակուած է այս թարգմանութիւնն, ի 1696, 1724 և 1744. վերջին տպագրէս օրինակ մը նուեր ընդունելով ինձմէ անոր քննադատութիւնը կ'ընծայէ Միւլլեր<sup>1</sup>: Յէջն 284—288 կը մեխաբանէ Վարդանայ Բարձրբերգուոյ մէկ հատուածը (տպ. ի Մոսկուա, 1864. և յաշորդ տարին ի Վէճնետիկ), նկատմամբ հայ տառից, որ կ'ըսէ թէ Մեսրովպ ընդունած ըլլայ ի Դանիէլէ ասորուոյ քանաւ ուերկու տառի, և միւս տասնըշորսն աստուածային յայտնութեամբ: մինչ Խորենացի և Ասողիկ կ'աւանդեն՝ թէ նախամեսրովպին այրութենքն ի քսան և ինն տառից կազմուած էին: Հինգերորդ հատորին մէջ (1894) Ղազար Փարակեցի և Կորիշն վերնալըրին տակ հատուածով մը՝ այս երկու մատենագրաց իրարու հետ ունեցած աղերսին աստիճանը կը քննէ (յէս 36—38): Իսկ յէս 52—58 Միհրար Գուշ հատուածով կը ստորագրէ և կը քննագատէ Վահան վ. Բառամեանցի հրատարակութեամբ «Միւլլերայ Գոշի գաւառանագիրք»ը, Վաղարշապատ, 1880: Նոյն հատորին մէջ՝ (68—75) «Մանր վիտողութիւնք» վերնագրին տակ՝ ուրիշ հատուածով մ'ալ՝ քանի մը բառից մեկնութիւնը կու տայ, որպիսիք են՝ ձադի, պօտումն, ոստիկան, Արամագդայ գօտի = «ծիածան» նշանակութեամբ, տումն = «աշխարհ, երկիր, ազդ, ժողովուրդ» նշանակութեամբ. յետոյ նոյն հատուածին մէջ Փարագեցոյ հետ կը համեմատէ Միւնեաց պատմի Ստեփանոսի ի Ղազարայ քաղաք մամիչ:

\* \* \*

Հրատարակած է գարձեալ Միւլլերի *Vieenna Oriental Journal* հանդուցեալ Ցոհան Հանուշի ընտիր երկասիրութեան վերջին մասն՝ Լեհաստանի մէջ խօսուած հայ գաւառաբարականին վրայ:

Մամաւոր յօդուած մ'ալ գրած է Միւլլեր՝ ի Բերլին հրատարակեալ *Beiträge zur vergleichenden Sprachforschung auf dem Gebiete der arischen, celtischen und slavischen Sprachen* ուսումնաթերթին մէջ, յորում Հայ լեզուի առանձնայատկութեանց վլրայ կը խօսի, ըսելով թէ, «Հայկականն ամէն բանէ յառաջ երանեան լեզուաց մասն կը կազմէ, անով՝ որ մասնակից է այն ձայնական փոփոխմանց, զոր կը նկատենք անոնց մէջ, մանաւանդ թէ անոնց մէջ ծանօթագոյն պարսկականին. օրինակ իմն, իր առանձին միտումն առ հագագայինն, յաճախ անցըը սանսկրիտ ավ հնչմանէն ի իս (հն) և սկզբնական վէն ի կ. (օր. խոյր = սավար, գոյն = սվապնա)»: Բայց նոյն հատորին մէջ (Պ, 457—464) հմուտ երանագիտն Փրիդ. Շպիգէ՝ կը քննագատէ իր իմաստուն ու-

1. Այս մասին տեղեկութիւն պիտի տրուի թղթակցութեանց շարքին մէջ:

ուումնակցին կարծիքն: Այսպէս նաեւ ուրիշ հայերէնագէտներ, որոնց պարագլուխն է ու սուցչապեսն Հիւրցման, համամիտ չեն Միւլլերի այն կարծեաց: Այսօր հաստատուած է թէ հայերէնն հնդկերպական նախալեզուին վլխաւոր բարբառներէն մին է, և անոր առանձին մէկ միւղը կը կազմէ: — Վերջապէս նոյն Ուսումնաթերթին մէջ (յէս 464) կ'ըսէ թէ Վանայ արձանագրութիւնը հաւանականք կարգացր կը ներկայացրնեն մեզ հայկական հին լեզուն, ինչպէս կը պնդէր նաեւ Մորթման: Այս մասին վերջնական վճիռ մը չէ տրուած տակաւին, առանց նայելու Ալյուի և այլոց կարծեաց: Ես այսօր աւելի ձայնակից եմ Միւլլերի քան ուրիշներու, ենթակարգելով որ Հայոց նախագրաբարեան լեզուն եղած ըլլայ այն: Բայց այս խնդրոյն կը դառնանք ուրիշ անգամ:

\* \*

Քիչ մ'ալ լսենք Միւլլերի մօտէն ծածօթ անձի մը վկայութիւնն, որ հրատարակուած է Բիշզանդիուն օրագրի Բ տարի 313 թուոյն մէջ, «Վամ» ստորագրութեամբ և սա վերնագրով. «Տբդ. Թրիտրիլ Միւլլեր Հայագէտը»: Պր. Յօգուածագիրը կ'ըսէ.

«1894ի ամառը Վիեննա համնելով, առաջին փափաքներէս մին եղաւ տեսնել Հայագէտ ծանօթ բրոֆէսոր Տբդ. Թրիտրիլ Միւլլեր: Վաղուց արդէն թղթակցութեան մէջ էի իր հետ. ուստի զբեցի միայն որ Վիեննա եկած ըլլալով, զինք անձամբ ճանչնալ կը փափաքիմ. և անմիջապէս միւս օրուան համար ժամանշանական իր բնակարանն, որ ինձ այնքան հիւրընկալ եղաւ այսուհետեւ — Գ. Թաղը, Մարբսէր-փողոց, տան մը առաջին յարկը, գեղեցիկ, բայց ոչ բնաւ գիտունի բնակութիւնը մատնող. սրահը՝ զրբատուն չկայ, հապա գաշնակ: Պատերն և սեղանն արեւելեան գորգերով ու բանուածքներով ծածկուած են, և վարպետին արեւելեան հերթին մէջ: Երախտագիտութեան պարտ մ'էր այդ իմ կողմէս՝ առ նախկին ուսուցիչս ումաններէնի»:

«Տբդ. Միւլլեր յանձնաբարեց ինձ ընՄիւլլեր.

տրելագոյն տաճկերէն երգերը գերմանիկէնի թարգմաննել, զոր գործադրեցի: Լոյս տեսաւ վերոյիշեալ թերթին անցեալ զարնան թուոյն մէջ (և այժմ, ձմեռ 97, և տակավին կը շարունակուի)»...: «Հայ զրականութիւնը կը ճանչէ խիստ լաւ: Մեր լեզուն զիտէ, իբրեւ թէ բոլոր կեանքն անոր ուսումնվա անցուցած րլար: Արզի աշխարհաբարը սակայն, զինք չի հապալքեր այնքան, և զրաբար կը խօսի: Բայց իր մասնագիտութիւնն է պարսկերէնը: Սահսկրիտ, տաճկերէն, արաբերէն, երայեցերէն նոյնքան ծանօթ են իրեն, և Ամերիկայի ու Ռվիէանիոյ վայրենեաց նորակաղմ լեզուներն եւս կ'ուսումնասիրէ բաղպատական նպատակաւ: Քաղաքական պայքարներէ հեռու, հանգարտ ու յարգուած կեանք մը կը վարէ Միկլէր. իր խօսակցութեանց մէջ երեցած է ինձ իբր համոզուած հակահրէական»:

\* \*

Կենսագրական ակնարկս չփակած՝ ի գէպ է կարծեմ զնել աստանօր հանգուցեալ հայասէր բարեկամիս մէկ խորհրդածութիւնն, հրատարակեալ Վիեննայի «Աւստրիական ամսաթերթ վասն Արեւելից<sup>1</sup>» հանդիսին մէջ, և թարգմանեալ ի Հանդ. ամս. 1887, յէջն 167. խորհրդածութիւն՝ զոր ըրած է հայ մատենագրութեան վերաբերեալ բանի մը նուրատիւ զրոց հրատարակութեան առմիւ:

«Հայ ծոլովուրը կանուխ զբրիստոնէութիւն ընդունած ըլլալով, միշտ աւելի արեւմըտեան բան արեւելեան կողմ միտած է նաեւ, ինչպէս իբր բագմարկած աղէտալից պատմութիւնը կը վկայէ, ի վկաս իբր բաղաբականութեանն, որ վերջացաւ Հրէից բաղաբականութեան նման՝ հայազգի ծոլովուրը ալ վայրավատին ցրուելով: Երբ այսպէս արտաքին յարաբերութիւններն ի սպառ վատարացան, ազգն իբր մտագրութիւնն առա-

ւելապէս իբր ներքին կենաց վրայ զարձուց, և նոր ժամանակներս՝ իբր ճոխ մտաենազրութեան վրայ: Եւ մինչզեռ ուրիշ ազգեր ի կորուստ կը գիմէին՝ ինք հոս ոտից կռուան մը զտաւ, որով կարող կ'ըլլայ իբր ապագային վրայ զուարթ աշօթ նայիլ, և արդի բաղաբականութեան բարեմանութեանց մասնակից ըլլալ:

«Քանի որ այժմեան լեզուաբնութիւնն ապացուցած է՝ թէ հայերէնն հնդեւրոպական լեզուաց շարբին կը վերաբերի, որ ըսել է թէ Եւրոպիոյ կրթեալ ժողովրդոց լեզուացն ազգակից է, Հայք իրենց լեզուովն և հին ու հնաւանդ մատենագրութեամբը մօտագոյնս մերձեցած են մեզի. որով չենք կրնար այս ազգին ալ չնուիրել այն մտագրութիւնն, որ ուրիշ գերմանացեր ժողովրդոց կը նուիրենք, զոր օրինակ Ռումաններու և Ալաններու:

«Առաջիկայ երկասիրութիւններս ըստ մասին կը ցուցընեն՝ թէ հայազգի զիտուններն Եւրոպիոյ զիտնական շարմմանց հազորդ են, և արեւմտից կրթութիւնն ու զիտութիւնն իրենց սեպհականներու կարեւոր միջոցները մտակարարել կ'ուոզեն իրենց հայրենակցաց. և ըստ մասին ապացոյց են՝ թէ կան հայ ազգին մէջ ալ մարդիկ, որ իրենց ազգային զրականութիւնը մեծաւ փութով կ'ուսումնասիրեն ու կը խնամեն. և թէ՝ ասոնց ալ աշխատսիրութիւնքը՝ կրնան սոյն ուղղութեան մէջ ի համեմատութիւն գալ արեւմտեայ զիտնոց երկասիրութեանց հետ»:

\* \*

Ահա այսպիսի փայլուն և բեղմնաւոր կեանըէ մը ետքը՝ տարւոյս մայիսի 25ին բաժնուեցաւ մեր տեսութենէն՝ այլ ոչ մեր որբերէն՝ Ուսուցապետն Փրիդրիխ Միկլէր, ի հասակի 64 ամաց:



## Ն Ա Ս Ա Կ Ա Ն Ե Ւ

ԹՈՒՂ Ղ Թ Ա .

ԴԵՂԱՐԱՆ

Կ. Յ. ՊԱՍՄԱՑԵԱՆ

510, ԱԿԻՒՄԱՐ, ՍԵԼԱՄԱԾՂ:

ՄԵԾԱՄՈՒՑ ԳԻՏԱՄԱԼԱՅ.

Zeitschrift für die Kunde des Mor-

Յ Յ Յ = Ա Ա , Ա Ա , Ա

Ֆ Ֆ = Բ Բ , Բ Բ , Բ

Հ Հ = Գ Գ , Գ Գ , Գ

Վ Վ = Դ Դ , Դ Դ , Դ

Կ Կ = Կ Կ , Կ Կ , Կ

Ի Ի = Ի Ի , Ի Ի , Ի

Լ Լ = Լ Լ , Լ Լ , Լ

Վ Վ = Խ Խ , Խ Խ , Խ

Կ Կ = Կ Կ , Կ Կ , Կ

Հ Հ = Հ Հ , Հ Հ , Հ

Վ Վ = Վ Վ , Վ Վ , Վ

Կ Կ = Յ Յ , Յ Յ , Յ

Վ Վ = Ն Ն , Ն Ն , Ն

Հ Հ = Զ Զ , Զ Զ , Զ

Վ Վ = Ա Ա , Վ Վ , Վ

Կ Կ = (Ա) Ա Ա , Վ Վ , Վ

Վ Վ = Լ Լ , Վ Վ , Վ

Յ Յ Յ = Մ Մ , Մ Մ , Մ

genlandes պատուական թերթին մէջ Զեր զրած մի յօդուածն՝ Հայ նշանագրաց մասին, թարգմանաբար հրատարակուած էր և «յԱմսորեայ հանդէս» Վիեննայի:

Զեր այդ յօդուածն տեղեկացայ՝ թէ նոյն խնդրոյն առմիւ զուք եւս ինձ նման կը հետեւիք Ասողկայ պատմութեան (Բ, 6):

Ինչպէս կը գրէր, «Հայոց նախմեսրոպեան նշանագիրն սեմական զրոշմ ունէր» թէւ, բայց միւս կողմէ տեսնելով հայ, և նոյն խկյոյն նշանագրաց՝ Բակարիացոց և կամ հին Պարսից սեպագրոց հետ ունեցած քիչ թատ նմանութիւնը, տարակուասնաց մէջ կը մնար:

Ահաւասիկ ըրած բաղդատութիւնն.

ԹՈՒՂ Ղ Թ Բ. 1

ՄԻՒԼԵՐ ՊԱՏՍԻՒԱՆ Ե Ա Թ Գ Թ Թ Յ Յ

Մեծապատիւ տէր!

Ընկալայ զպատուական նամակին ձեր գր. յ5/47 մայսի եւ մեծաւ խնդութեամբ տեսի զպարապումն ձեր յուսումնասիրական գործս Եւրոպացի զիտնականաց, որ մեծ պատիւ է մերոյին փոքութեան և ձեր բային գերածնուութեան.

վասն համարման ձեր յաղագս աղբեր հայկական նշանագրոց պարտ է ինձ խսուտան զի բեւեռական նշանագիրը հին պարսից յետ ասպատակի եւ աւերման աշխարհի ի ձեռն աղեկսանդրոսի մակեղունացույոյ ի սպառ կորուսեալ են եւ պարսիկ ինքեանք ի սասանական տէրութեան զասորական նշանագիրս ի գործ ածէին. վասն որոյ ոչ կարեմ իմանալ յուսութիւնիյէլ ասորի եւ մեսորովք զբեւեռական օրինակս հայ նշանագրոց առեալ իցեն.

1. Այս թուղթը Կ. Պուսոյ «Արեւելք» օրագրին մէջ հրատարակած է սիրուն խորհրդառութեամբ մը՝ նշանաւոր գրագէտ և իմաստակը «Մելանիա»:

յարդանօք ողջունելով զգերած նոշթիւն ձեր  
եւ զձեռն ձմելով<sup>1</sup> մնամ  
ձեր խ. ծ.

ՓԻՒԹԻՒԽ ՄԻՒԼԵՐԵՍՆ

ուսումնակետ եւ ուսուցիչ  
ի ճեմարանի գիտութեանց

Վահեայ 22. յունիսի.

D.r F. Müller III, Marxergasse 24, a. WIEN.

Թ Ո Ւ Ղ Թ Գ.

Կ Ր Կ Ի Ն Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն

Դեղաբան  
Կ. Յ. Պատմաճեան  
540, Սկիւտար, Աէլամալզ:

Մեծանուն և հանճարաշատ Արեւելագի-  
տի, Տեառն իմում Քրիպրիխայ Միւլերեան,  
ակնածախառն յարգանօք և ամենայն խո-  
նարդութեամբ ողջոյն:

Թէ քանի՞ն բերկրապատար խնդութեամբ  
և երախտագէտ չնորհակալեօք լցոյց զմեզ  
թուզթղ սիրազեղ, զրեալ առ մեր նուաս-  
տութիւն, զայդ անմարթ է ինձ ընդ զրով  
սահմանի զրաւել. այսու զի այր ոք մեծա-  
նուն և աշխարհահռչակ՝ յուսմունս Արեւե-  
լան լեզուաց, որպիսի ոք Զերդ բարձրու-  
թիւն է, զիշանի անարգամեծար խոնարհու-  
թեամբ պատասխանի առնել իմում փանաքի  
զրութիւն, և այսքանեւ եսո ոչ շատացեալ՝  
իբրեւ ընդ հաւասարի ումեմն՝ եղբայրաբար  
և սիրալիր բանիւք լինի ընդ իմում նուաս-  
տութեան խոսակից: Ահա այզմ չնորհի՝ ա-  
սեմ չմարթի ինձ բանիւ լոկով լինել երախ-  
տահատոյց. այլ ի սրտիս տախտակի անջինց

1. Գերմաներէն «սեղմել զձեռն» չեն ըսեր,  
այլ die Hand drücken == «զձեռն ձմելով», «բ-  
ուեղմել իմաստով առ կը գործածութ հոս:

արձանագրեալ պահեցից՝ յորչափ զոդ կենաց  
շնչեմ՝ զանուն չնաշխարհիկ Տեառնդ, որ  
սիրելին է ինձ, և լինիցի յաւէտ՝ հանգոյն  
կենաց իմոյ:

Այլ միթէ իցէ ինչ, եթէ զիտողութիւն  
մի յառաջ բերիցեմ ի վերայ հատածի իրեք  
պատուական թղթոյդ, յորում յետ աշխար-  
հակալութեանն Աղեքսանդրի, ասէք, ի սպառ  
կորեան բեւեռական նշանագիրը Պարսից.  
ապա ուրիմն՝ որնվ նշանազրովք արդեւք զրե-  
ցան բեւեռական արձանագիրը Բեհիստոնի  
և Պերսեպոլոյ և այլոցն, զորոց և զբեւե-  
ռազիրն, և զընթերցուածն, և զթարզմա-  
նութիւնն միանգամյն տեսեալ է իմ:

Արդ, եթէ այդ բեւեռագիր արձանազրու-  
թիւնը ի միջի կան, որպէս կարծենս, հա-  
մեշիք մարդասիրաբար և զայս հետաքրքրու-  
թիւն իմ յազեցուցանել, և ընդունել կան-  
խաւ զանկեղծ հաւասարի խորին և ակնածու  
յարգանցու, որով մնամ միշտ մարդասէք  
Տեառնդ անձնանուէր՝ խոնարհ ծառայ

ԿԱՐԱՊԵՏ Յ. ՊԱՍՄԱՆԵՍՆ  
ՎՐԵՄՎ. Է ԳԵՂԱԳՆՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈՂԻՆ,  
ԽԵ ՆԱՐԱՄԱՐԴԻ ՏՅԱՅ:

Թ Ո Ւ Ղ Թ Գ.

ՊԱՍՄԱՆԻ ԱՆԴ ՄԻՒԼԵՐԵ Գ Թ Գ. Թ Ո Յ Յ

ՎԻՆԵՆԻ Ի Զ Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն

Անձնապատիւ աէլո!

ԸՆԿԱԼԵՅ զպատուական և սիրալիր նա-  
մակն ձեր, զրեալ յիբ<sup>2</sup> նաւասարդի և ըն-  
թերցայ զնա բերկրալի ինդութեամբ. ահա-  
ւասիկ պարապեալ շտապիմ պատասխանել  
զհարցումեդ վասն բեւեռածեն նշանազրու-  
թեան հին Պարսից.

2. ԱՐԵՎԱԿ թէ իւթ թուականո՞ ի՞ն է կարդացեր:

արձանագրեալ Բեհաստանի և Պերսեպոլոյ  
կամական բարութիւն ձերոյին զերագնուու-  
թեան աղերսելով թէ մարթ իցէ զայն զիրս  
ի բազաթի ձեր կ. պողիս գտանել.  
զնորհակալութիւն յափառենական փոքրը-  
կութեան իմոյ յառաջ ազգելով ակնածու եւ  
բարեկամական ողջունիւ մնամ ձերոյին գե-  
րազնուութեան խոնարհ ծարայ

ՓԻՒԹԻՒԽ ՄԻՒԼԵՐԵՍՆ

III, Marxergasse 24, a.

ողջ լեզուք մեծապատիւ տէր եւ սիրելի  
բարեկամ. ակնածու յարգանօք մնամ ձե-  
րոյին զերագնուութեան

ԽՈՆԱՐՀ ծարայ

Փ. ՄԻՒԼԵՐԵ.

III, Marxergasse 24, a.

Թ Ո Ւ Ղ Թ Ե Շ 1

Խ Ա Դ Ի Ր Մ Ի Ւ Լ Ե Ր Ի Ւ

ՎԻՆԵՆԻ Հ Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն

Անձնապատիւ բարեկամ!

ի վաղ ժամանակաց ի ինդիր լինիմ զրոցն  
հոչակաւորից որբ կոչին «զիրի պատմութեան  
կայսերն Փոնցիանոսի և կիոջն և ս(ր)պոյն  
Դիկղետափանոսի և յեօթանց իմաստափաց»  
եւ բարզում անդամ յուզելով ոչ կարէի զնոսա

1. Հարկ է չկար Միւլերի վերի (Գ) թղթոյն  
պատմուականել, և չպատմուականցի: Այլ մեծ  
եղանակութիւնն՝ երբ ստացայ երմէն սոյն  
(Ե) թղթուն:

2. Այս հա սեալ է. զի Սկիւտար կը կո-

բնուունիլ. հուսկ յետայ ապաւինիմ ի բարե-  
կամական բարութիւն ձերոյին զերագնուու-  
թեան աղերսելով թէ մարթ իցէ զայն զիրս  
ի բազաթի ձեր կ. պողիս գտանել.

զնորհակալութիւն յափառենական փոքրը-  
կութեան իմոյ յառաջ ազգելով ակնածու եւ  
բարեկամական ողջունիւ մնամ ձերոյին գե-  
րազնուութեան խոնարհ ծարայ

ՓԻՒԹԻՒԽ ՄԻՒԼԵՐԵՍՆ

III, Marxergasse 24, a.

ԲԻՀԱՆԵՐԻՒՆ 2 Ժ. ՏՐՀ 8326.

Մեծապատիւ Ուսումնապետիկ, Տեառն  
Փրեգերիկոսի Միւլերեան, հոգեկցորդ բարե-  
կամի իմում խոնալ:

Մեծաւ բերկրութեամբ լցաւ սիրտ իմ յըն-  
գունել անդ իմում՝ զիրկոսին վերջինս սի-  
րազիմ նամակաց Զերոց. զի առաջնովն զիե-  
տափոյդ հոգեայ իմոյ պարապեալ զիզձու, և  
հուսկ յետնովն պատեհս իմն բարեպատեհս  
ընծայէի ինձ՝ սպաս զուզնաբեայ հարկանել  
Զերում մեծութեան, առաքելով առ Զեղ ի  
մատենապարանէ աստի իմմէ զմատենիկն՝  
որում ի վազ ժամանակաց հետէ, ասէիք,  
լինել ի ինզիբը, և զորոյ ամօք յառաջ լցեալ  
էի ձեռազրով զթերի իջիցն:

Արդ, մեծապատիւ Տէր և սիրելի բարե-

1. Հարկ է չկար Միւլերի վերի (Գ) թղթոյն  
պատմուականել, և չպատմուականցի: Այլ մեծ  
եղանակութիւնն՝ երբ ստացայ երմէն սոյն  
(Ե) թղթուն:

2. Այս

կամ, ընկալարուք ընդ այդմ չնչին առհաւատչէի անսահման սիրոյս՝ և զիսրին ակնածախառն մեծաբանս, որով մնամ միշտ Տեառնդ իմում անձկակարօտ

Խոնարհ ծառայ  
Կ. Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԹՈՒՂԹ Ե.

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԻՒԼԵՐ Զ ԹՎ.ԹՈՅՑՆ

ՎԻԵՆԵՐԱ 25 ԴԵԿ. 1889

Մեծապատիւ եւ սիրելի բարեկամ!

Մեծաւ բերկրութեամբ ընկալայ զպատուական նամակն ձերոյին գերազնուութեան եւ սիրտ իմ լցաւ խնդութեամբ եւ ուրախութեամբ հայելով զմատենիկ զոր ոչ երբէք տեսանել յուսացայ. ընկալարուք պատուական եւ սիրելի բարեկամ զգոհութիւն եւ չնորհակալութիւն մերոյին փոքրկութեան վասն այդ մեծազին ընծայի, զոր զրութեամբ բարեկամական ձեռին զարգարեալ ի զրանոցի իմ որպէս զանձ զգուշութեամբ պահեցից. տացէ ինձ աստուած զի զայդ մեծ սպասաւորութիւն ձերոյն բարեկամութեան հատուցանել կարացից!

ողջ լեռուք մեծապատիւ Տէր եւ սիրելի բարեկամ եւ ընկալարուք զիրախառն եւ ակնածու մեծաբանս, որով մնամ ձերոյին գերազնութեան

Խոնարհ ծառայ

Փ. ՄԻՒԼԵՐԵԱՆ

<sup>1.</sup> Այս գրոց առթիւ Միւլերի տուած աեղեկութիւններն յիշեցինք արդէն կենսագրական ակնարկիս մէջ (յէջն 483). Էսկ այստեղ նոյնութեամբ ի մէջ կը բերեմ այն տաղերը միայն՝ զորս զրած է յիշեալ զրոց բանասիրական արթեքը ցոյց տալուն համար. — «Գիրքը շատ սակաւակուտ է, և Եւրոպայի հրապարակաւանց շարուց պիտի ունենան: Հատ տարի ի զուրք փնտացից այս զիրքը, մինչեւ որ քէ ժամանակ յառաջաւութեան:

2. Ը. թուղթ կորսուեցաւ:

3. Պ արի, 1890 էջ 41, թրդմ. ի Հ. Յ.  
Վ. Տաղան:

ԹՈՒՂԹ Թ. Թ.

Ա. Ո. Թ. Հ. Հ. Ե. Բ. Կ. Ս. Ս. Ի. Բ. Ի. Թ. Ե. Ա. Ա.

ԳԵՂԱՐԱՆ  
Կ. Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

310, Սկիւտար, Սէլամուզ:

Կ. Պոլիս, Դ Սեհեկան 882Բ.

Մեծապատիւ Տէր և սիրելի բարեկամ.

Յընթեռնուկ անդ իմում ի վերջին թուփ «Արարեայ Հանգիսի<sup>3</sup>» զթարգմանութիւն Երածութեան հատուածոցն, զոր երբեմն մասն առ մասն հրատարակեալ էր յաւերժական յիշատակաց արժանին ողբացեալ հայերէնագէտն Յուլիսանիս Հանուշ՝ յ «Արեմաղիտական թերթին Վիեննայ», և զոր աղաս զնոյն ի մի վայր հաւաքեալ Չեր առանձինն տետրակաւ և հմուական իմն Յառաջարանիւ պսակեալ վերսաին ի ըսոյ ածեալ էր. իղձ մեծի տենչահաց զոր առ սիրելութիւն Չեր տածէի՝ վասեալ անդին բորբոքեցաւ յիս, և զի փափազէի օգուտ բաղել յամենայն որ կարիցէ ճարակ ինչ մատուցանել այդմ սրբազն հրոյ սիրոյս՝ պատճառ ասի յընթերցուածոց անտի թարգմանութեանն ի վեր անզոր յիշատակելոյ, զրել զթուզթս առ և եւս արծարելոյ զնոյն հուր աստուածալոյց սիրոյ ի սեղան սրտից երկոցոնց. և զի մի զանձին եւեթ զհաճոյս խնդրել երեւիցիմ զմեծազին ժամանակի Չերոյ վայրիկանս յընթերցումն իմոց տողից վատնեալ, առա-

քեցի ընդ թղթոյս զայն թիւ «Մասիս» լրազրոյ, յարում հրատարակեալ էր յօդուած մի առ յինէն զրեալ ունելով բանս ինչ յայն պիսի իմն զաւառաբարբառ, զորմէ գոն ուրբեր լեալ են բանք ի հրապարակեալիս ազգիս, կամեցեալ այսու նորագոյն իմն ճարակ մատուցանել հետախոյզ մտաց իմաստուն բանասիրիկ<sup>1</sup>:

Զայս եւս արժան համարիմ յայտ առնել աստանօր զի և յոստանիս աստ կ. Պոլոյ ուսմիկին ըստ օրինակի գաւառաբարբառոյն արեւելեայց՝ զմիջին տասող — բ, գ, գ, ձ, ջ — ճշրտիւ արտաբերեն, բայց զնուրբո՛ ոչ նուրբ. ըստ օրինակիդ, բակ, դատաստան, գիտեմ, ձի, չուր բարբդ հնչին բաց, ձածան, զիմետ, ձի, ձչուր, վարդին ի բայցից, և թէ եական բայն մեր՝ է պակասաւոր որպէս և թուրբարէնն, այսպէս՝ գտանէ նմանութիւն մեծ ի ժամանակս բայցից, և թէ եական բայն մեր՝ է պակասաւոր որպէս և թուրբարէնն, այն է ունի ներկայ, անկատար և ստորագատական եւեթ, զոր օրինակ՝ եմ = չէ, էի = քաջազի, իցեթ = քաջազի. իսկ զմեւս ժամանակն առնու ի բայցին չինչիմ կամ եղանակն է քաջազի: ի մերում՝ որպէս և թուրբարէնին՝ պակասէ սեռ (genit):

Այսոքի են փաստք զորս ի հանդէս ածէ բարեկամ մեր:

Արդ խնդրեմ յաղնուութենէ Չերմէ զի հանծիիք ընդ հուպ հազորզել ինձ զկարծիս Չեր զայսմանէ, և երախտապարա կացուցանել զՉեր զհաւասիս, մնամ

Կ. Պոլիս, իւ Արեգի 882Բ:

Խոնարհ ծառայ

Կ. Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԹՈՒՂԹ Թ. Թ.

Ն Ո Ր Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Մ

ԳԵՂԱՐԱՆ

Կ. Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

310, Սկիւտար, Սէլամուզ:

Առ մեծաբազոյ վարդապետ Փրիզրիսոս Միւլերեան խնդրա:

Յաւուրսս յայսոսիկ ոմն ի բարեկամաց յայտնէ կարծիս ի միում ի տեղական թերթից՝ թէ լեռուփս Հայոց սկիզբն առեալ է ի տուրանեանէ, և ոչ ի հնդկուպականէ. և առ յապացուցանել զայս յաւելու ասել թէ

<sup>1.</sup> «Խնուսի կեանքէն յիշատակ մը » վեպական յօդուած էնա, հրատարակեալ ի Մասիս շաբաթաթերթի, 1890 (?):

Հայոց՝ սահմանակից գոլով վրաց և Ազուանից և այլոց հիւսիսական ազգաց տուրանեանց, լեզու նոցա զկեցեալ է առ յապայս մարմին հնդկուպական՝ ի տուրանեան կմախս, և թէ զայր մարմին փոխ առեալ է հայ լեզուին յարեւելեան (Պարսիկ) և յարեւելեան (Պարսիկ) կ յարեւելեան Յայութին՝ յարեւելեան (Պարսիկ) և յարեւելեան (Պարսիկ) մարմին՝ ծանօթ թուրբարէնն, որ, որպէս յայտ է, ունի ծագումն տուրանեան: Կմախս այս ակն յանի յանդիման երեւի, ասէ, յորժամ բաղդատեմք զբայս լեզուիս ընդ թուրբարէնին. այսպէս՝ գտանէ նմանութիւն մեծ ի ժամանակս բայցից, և թէ եական բայն մեր՝ է պակասաւոր որպէս և թուրբարէնն, այն է ունի ներկայ, անկատար և ստորագատական եւեթ, զոր օրինակ՝ եմ = չէ, էի = քաջազի, իցեթ = քաջազի. իսկ զմեւս ժամանակն առնու ի բայցին չինչիմ կամ եղանակն է քաջազի: ի մերում՝ որպէս և թուրբարէնին՝ պակասէ սեռ (genit):

Այսոքի են փաստք զորս ի հանդէս ածէ բարեկամ մեր:

Արդ խնդրեմ յաղնուութենէ Չերմէ զի հանծիիք ընդ հուպ հազորզել ինձ զկարծիս Չեր զայսմանէ, և երախտապարա կացուցանել զՉեր զայրպակ

լ. ծ.

Կ. Պոլիս, իւ Արեգի 882Բ:

ԹՈՒՂԹ Թ. Թ.

Մեծաբազոյ տէր եւ սիրելի բարեկամ!

Խնդրութեամբ մեծաւ ընկալայ զպատուած կանական կարծեամբ առաջաւում վասն կարծեաց ձերոյին բարեկամին պատասխանել.

<sup>2.</sup> Ծաղիկ մանկանց շաբաթաթերթ, թիւ 1, 2, 4, և այլն, 1891 տարւոյ նոր շրջանի:

Հայկական լեզուն հաւաստեաւի թիւ հընդերովական լեզուաց համարելի է, վասն զի քերպականութիւն նորին բոլորովին զապաւորութիւն այնց լեզուաց երեւցուցանէ. և ապա այնք բայք հայկական լեզուիս որբ ոչ փոխառելք այլ բնիկը են որոշ ձայնական օրինօք կերպարանեալ են զի անհնար է զնոսա փոխառեալս իմանալ. Եւ վեր քան զամենայն – եթէ զհայկական լեզուն թուրկաց լեզուաւ համեմատեմբ պարտիմբ ոչ զնորաստեղծ օսմանական լեզու այլ զհնագոյն լեզուն Ոյգուրաց և Յակովթաց 'ի կիր արկանել եւ այնով ազագաւ երեւեցի զի բազում այս օրինակի համեմատութիւնք զի ամուսնականք են ստոյք են.

Յուսալով թէ ձերոյին գերազնուութիւն ողջ է և ըդձալով թէ բարեաց տուիչ և ապա ձեզ զառողջութիւն ընձայեցէ – հոգովի բարեկամապէս զձեան ձեր ճամկենով մնամ ձեր խոնարհ ծառայ

Փ. Միկունիք.

Վիեման 24. Ապր. 1894.



ԿՐԿԵՆ ՀԱՐՑՈՒԽՆ ԱՐ ՄԻԿԱԼԵՐ

Գեղարքունիք  
Կ. Յ. Պատմաման  
540, Սկիւտար, Սէլամուզ:

Մեծապատիւ բարեկամի իմում, Տեառն  
Փրեղըիւ Միւլերի, ողջոյն և սէր:

Ոչ սակաւ ժամանակ է յորմէ հետէ զազարեալ է մեր առնել թղթագրութիւն ընդ միմեանս, և ընդ այս ցաւէր ինձ: Խնդրէի առիթ զիպող, և այն ահա յաւուրս այսոսիկ մատուցաւ. զհարցմանէն են բանք իմ որ ի «Մասիս» հանդիսի, ի թիւ 46 երորդ աւուր Յունուարի այսը ամի, և զոր յեղումբ աստի բարբառ զրոց՝ առաջի առնել Զեղ.

«Իցէ եղեալ արգարեւ ժամանակ յորում խօսէր զրաբար լեզու. և եթէ այնպէս իցէ,

Ե՞րբ և յնոր գտւասու: Խափր այնչափ միայն էր ընդ խօսեալն զրաբար և ընդ զրեալն որչափ այժմ ընդ աշխարհաբարն զրեալ և ընդ խօսեալն»:

Հանդէսն այն զհարցմանսով առաջի արկեալ հմտից բանասիրութեան և պատմութեան՝ ինզրէր պատասխանի առնել, և այս վասն վիճին այն ինչ վերստին յուղելոյ ընդ ջատագովս հնայն զրաւորի և ընդ որս նորոյն պաշտպան կան:

Ոմանք ի մերոց բանասիրաց արարին պատասխանի, որպէս յականաւորաց եւրոպացոց Մաքս Միւլեր և կոնիրիր: Ապա և մեք ինզրեմբ ի Զէնջ, որպէս ի հմտագունէ յայսպիսի խնդիրս, յայտնել զկարծիս Զեր:

Խնդրութիւն մեծ եղեալ է ինձ յընթեանու զմուզի Զեր զառաջինս, և մեծագոյն եւս եղիցի զայս նուազ առ կարօտոյ իմում յակն արկանելոյ բանս ինչ անզրէն առղեալո ի Զէնջ:

Մնամ միշտ մեծապատութեանդ Զերում ակնածութեամբ և անձնազիր սիրով

Խոնարհ ծառայ

ԿԱՐԱՊԵՏ Յ. ՊԱՍՄԱՇԵԱՆ

Կ. Պատիս, և Անեկան 882:

(ի Պարիս հաստատուելու ետքը, առաքեցի վազեմի բարեկամիս՝ վերջին հրատարակած աշխատութիւններէս, որոց մասին հէդ բարեկամն հետեւեալ տողերը զրած է վերջին անգամ ըլլալով, թղթաբարտի մը վրայ):

Թ. Ո. Կ. Թ. Ժ. Գ.

Պատուական տէր և սիրելի բարեկամ!

Մեծաւ շնորհակալութեամբ վամն առաքելոյ զերկու տետրակս ողջունէ զձեզ

Փ. Միկունիք

Վիեման 24 Փ. 1897

61

2013



